Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 17-ի N 727 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառման մատյանի (այսուհետ՝ տեղամասերի հաշվառման մատյան) վարման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Տեղամասերի հաշվառումը վարում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Տեղամասերի հաշվառման մատյանում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառումը կատարվում է միայն մեկ անգամ: Ընդերքի նույն տեղամասում նույն աշխատանքի հաշվառումը երկրորդ անգամ արգելվում է:

4. Տեղամասերի հաշվառման մատյանում՝ համաձայն ձևի, նշվում է՝

1) հաշվառման հերթական համարը, օրը, ամիսը և տարեթիվը.

2) պետական հաշվառման համարը.

3) իրականացվող ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների թույլտվության կամ համաձայնության համարը, տալու օրը, ամիսը և տարեթիվը.

4) երկրաբանական ուսումնասիրության ընդերքի տեղամասի անվանումը, գտնվելու վայրը.

5) օգտակար հանածոյի անվանումը.

6) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքի ձևը.

7) աշխատանքների կատարման ժամկետը՝ սկիզբը և ավարտը (օրը, ամիսը և տարեթիվը).

8) ծանոթագրություն այնակում կատարվում են միայն երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթում կատարված փոփոխությունների վերաբերյալ գրառումները:

5. Լիազոր մարմինն ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը վավերացնելուց հետո 5-օրյա ժամկետում տեղամասերի հաշվառման մատյանում կատարում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառում:

6. Տեղամասերի հաշվառման մատյանում գրառումները պետք է կատարվեն գրիչով՝ պարզ ու ընթեռնելի ձեռագրով, առանց կրճատումների, ջնջումների և տողեր բաց թողնելու:

7. Տեղամասերի հաշվառման մատյանում անճշտության և սխալ գրառումների ուղղումը կատարվում է մատյանում հաշվառում կատարող աշխատողի կողմից՝ սխալ կամ ոչ ճիշտ գրառումները վերցնելով փակագծերի մեջ, հաջորդ տողում ավելացնելով ճիշտ գրառումները և կատարված ճիշտ գրառման կողքին դրվում է համապատասխան աշխատողի ստորագրությունը:

8. Տեղամասերի հաշվառման մատյանում հաշվառելուց հետո եռօրյա ժամկետում ընդերքօգտագործողին է տրվում տեղեկանք ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառման մասին՝ լիազոր մարմնի հաստատած ձևին համապատասխան:

9. Տեղամասերի հաշվառման մատյանը խիստ հաշվառման փաստաթուղթ է: Այն պետք է լինի կարված (ժապավենված), իսկ թերթերը՝ համարակալված և կնքված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի կնիքով:

10. Տեղամասերի հաշվառման մատյանը պահպանվում է անժամկետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև

ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ

NN ը/կ	Հաշվառ-ման օրը, ամիսը, տարեթիվը	Պետական հաշվառման համարը	Թույլտվության կամ համաձայնության համարը և տալու օրը, ամիսը և տարեթիվը	Երկրաբանական ուսումնասիրու-թյան ընդերքի տեղամասի անվանումը և գտնվելու վայրը	Օգտակար հանածոն	Երկրաբա-նական ուսումնա-սիրության աշխա-տանքի ձևը	Աշխատանքների կատարման ժամկետը (օրը, ամիսը և տարեթիվը)		Ծանոթագրու-թյուն
							սկիզբը	ավարտը	
	1	2	3	4	5	6	7	8	9
1.									
2.									
3.									
4.									